# Ա Ռ Ա Ր Կ Ո Ի Թ Յ Ո Ի Ն Ն Ե Ր

## ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 18-Ի ԹԻՎ 197-Ա, ՄԱՐՏԻ 18-Ի ԹԻՎ 198-Ա, ՄԱՐՏԻ 21-Ի ԹԻՎ ԹԻՎ 202-Ա-206-Ա, 208-Ա, 209-Ա ԵՎ ՄԱՐՏԻ 22-Ի ԹԻՎ ԹԻՎ 210-Ա-215-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 197-Ա որոշման ենթակետերում հանձնաժողովի անդամների պաշտոնները թերի են գրառված:

Թիվ 198-Ա որոշման նախաբանում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ մասին կատարված հղումը սխալ է, քանի որ 4-րդ մասն ուժը կորցրած է ճանաչվել (16.12.21թ. ՀՕ-397-Ն):

Որոշման դրույթներում կատարված հղումներն անհրաժեշտ էր գրառել որոշման նախաբանում: Բացի այդ, որոշման դրույթների համարակալումը սխալ է կատարված:

Թիվ թիվ 202-Ա, 203-Ա, 205-Ա, 206-Ա, 208-Ա, 210-Ա, 211-Ա և 213-Ա որոշումների նախաբաններում անհրաժեշտ էր հղում կատարել նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներին: Բացի այդ, նշված որոշումների բովանդակությունները չեն համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներին:

Թիվ թիվ 203-Ա-206-Ա և 208-Ա-215-Ա որոշումները չեն համապատասխանում ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 2-րդ կետի 7-րդ ենթակետին:

Թիվ թիվ 204-Ա, 209-Ա, 214-Ա և 215-Ա որոշումների վերնագրերն անհրաժեշտ է համապատասխանեցնել որոշումների 1-ին կետերին:

*Կատարող՝ Նաիրա Մարտիրոսյան*
*27.04.2022թ.*